Ուղեցույց

Ինչպե՞ս և ե՞րբ դիմել Հանրային պաշտպանի գրասենյակ

Հունվար, 2020թ.

Սույն ուղեցույցը ֆինանսավորվել է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դրամաշնորհի շրջանակներում: Այս կայքում/ուղեցույցում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան հետ պարտադիր չէ

1. Ի՞նչ հաստատություն է հանրային պաշտպանի գրասենյակը

Հանրային պաշտպանի գրասենյակը ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստեղծված և նրա կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որը պետության կողմից հատկացված միջոցներով օրենքով նախատեսված դեպքերում կամ օրենքով նախատեսված խմբերի անձանց տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն:

2. Ո՞ւմ կողմից է ցուցաբերվում անվճար իրավաբանական օգնությունը

Անվճար իրավաբանական օգնությունը ցուցաբերվում է հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանների՝ հանրային պաշտպանների կողմից, որոնք աշխատանքի են ընդունվում մրցույթի արդյունքում:

3. Ի՞նչ է ներառում տրամադրվող իրավաբանական օգնությունը

Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

4. Ո՞ւմ է տրամադրվում անվճար իրավաբանական օգնություն

Անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է հետևյալ անձանց և նշված կարգով՝

ա) «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված 16 խումբ անձանց՝ իրենց դիմումի հիման վրա,

բ) քրեական հետապնդման ենթարկվող անձանց (կասկածյալ կամ մեղադրյալ)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ վարույթն իրականացնող մարմնի (քննիչի, դատարանի) որոշման կամ դիմումի հիման վրա,

գ) անգործունակ ճանաչվող անձանց՝ վարույթն իրականացնող դատարանի որոշման հիման վրա:

5. Ո՞վքեր կարող են անմիջականորեն դիմել հանրային պաշտպանի գրասենյակ անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Հանրային պաշտպանի գրասենյակ անմիջականորեն դիմելու և անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեն հետևյալ 16 խումբ անձինք.

1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.

3) դատապարտյալներին.

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.

5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.

6) գործազուրկներին.

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.

9) փախստականներին.

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում:

12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց.

13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց.

14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին.

15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով.

16) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության

վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձանց:

6. Ո՞ր դեպքում չի կարող ցուցաբերվել իրավաբանական օգնություն

Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել՝

1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով).

2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (մեկ միլիոն ՀՀ դրամը) գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.

3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

Անվճար իրավաբանական օգնություն կարող է չցուցաբերվել նաև ակնհայտ անօրինական և անհիմն պահանջի գործերով, երբ անձը հանդես է գալիս հայցվոր կամ դիմող կողմում:

Անվճար իրավաբանական օգնություն կարող է չտրամադրվել, իսկ ցուցաբերվող օգնությունը կարող է դադարեցվել նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, փաստաբանի վարքագծի կանոնագրքով, հանրային պաշտպանի գրասենյակի կոնոնակարգով, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին կարգով նախատեսված դեպքերում և հիմքերով:

7. Ո՞ր դեպքում է անձը համարվում վճարունակ և նրան չի տրամադրվում անվճար իրավաբանական օգնություն

Վճարունակ է համարվում այն անձը, որը ունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն ունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (մեկ միլիոն ՀՀ դրամը) գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

8. Ի՞նչպես դիմել հանրային պաշտպանի գրասենյակ

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով անձամբ ներկայանալ հանրային պաշտպանի գրասենյակի նստավայրեր, ներկայացնել համապատասխան դիմում՝ կցելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց

համապատասխան խմբին պատկանելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը (փաստաթղթերը):

Հանրային պաշտպանի գրասենյակ հնարավոր է դիմել նաև լիազոր ներկայացուցչի (օրինակ՝ նոտարական վավերացմամբ լիազորված), ինչպես նաև փոստի, էլեկտրոնային փոստի, հանրային պաշտպանի գրասենյակի կայքէջի և հեռապատճեն ուղարկելու միջոցով՝ ներկայացնելով ստորագրված դիմում և անհրաժեշտ փաստաթղթերը: Փոստի, էլեկտրոնային փոստի, հանրային պաշտպանի գրասենյակի կայքէջի միջոցով և հեռապատճենով ուղարկված դիմումը բավարարվելու դեպքում դիմողը պետք է հանրային պաշտպանի գրասենյակ ներկայանա բանավոր խորհրդատվություն ստանալու նպատակով:

Առանձին դեպքերում, դիմող անձի տեղաշարժման խնդիրների վերաբերյալ հավաստի տվյալների առկայության դեպքում անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու նպատակով կարող են իրականացվել տնայցեր:

9. Ինչպե՞ս կարող են հանրային պաշտպանի գրասենյակ դիմել փակ հաստատություններում պահվող անձինք

Փակ հաստատություններում պահվող անձինք, բացի ընդհանուր կարգից, հանրային պաշտպանի գրասենյակ կարող են դիմել նաև հաստատության վարչակազմի միջոցով:

Փակ հաստատություններում պահվող անձին անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է այդ հաստատություն հանրային պաշտպանի այցի միջոցով:

10. Որտե՞ղ են գտնվում հանրային պաշտպանի գրասենյակի նստավայրերը.

Հանրային պաշտպանի գրասենյակը ներկայացված է (նստավայրեր ունի) ինչպես Երևանում, այնպես էլ բոլոր մարզերում:

Հանրային պաշտպանի գրասենյակի Երևանի նստավայրը տեղակայված է Զաքիյան 7-2 հասցեում:

Մարզերում հանրային պաշտպանի գրասենյակի նստավայրերը տեղակայված են հետևյալ հասցեներում.

Արագածոտնի մարզ	քաղաք Աշտարակ, Սիսակյան 16

Արարատի մարզ	քաղաք Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող., 60 շ. (Արարատի մարզպետարան)
Արմավիրի մարզ	քաղաք Արմավիր, Հանրապետության 28 քաղաք Էջմիածին, Կամոյի 6
Գեղարքունիքի մարզ	քաղաք Գավառ, Սայադյան 2/1 շ. քաղաք Սևան, Աբովյան փող., թիվ 2/2 քաղաք Վարդենիս, Անդրեսյան 4
Լոռու մարզ	քաղաք Վանաձոր, Մյասնիկյան 6/37 քաղաք Ալավերդի, Թումանյան 8
Կոտայքի մարզ	քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք (Կոտայքի մարզպետարան) քաղաք Աբովյան, Երիտասարդական փող., 5/3 քաղաք Եղվարդ, Երևանյան փող., 1 շենք
Շիրակի մարզ	քաղաք Գյումրի, Անկախության հրապ. 9
Վայոց ձորի մարզ	քաղաք Եղեգնաձոր, Անդրանիկի փող., 12/4
Սյունիքի մարզ	քաղաք Կապան, Ա. Մանուկյան 1ա, 19 քաղաք Գորիս, Մաշտոցի 3 փող., թիվ 2 վարչ. շ., 2-րդ հարկ

11. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնեն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված տեղեկանքը՝ ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

12. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի հաշմանդամության փաստաթուղթը (հաշմանդամության վկայական, հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք) և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

13. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի դատապարտյալն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Ազատությունից զրկված դատապարտյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկի ուղեկցական գրությամբ հանրային պաշտպանի գրասենյակ ստացված դատապարտյալի դիմումի հիման վրա, իսկ ընդհանուր դեպքում դատապարտյալ լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը (օրինակ՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ) և անձը հաստատող փաստաթուղթը հանրային պաշտպանի գրասենյակ ներկայացվելու (անձնագիր):

14. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից տրված տեղեկանքն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու վերաբերյալ և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

15. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի Հայրենական մեծ պատերազմի մասնակցի վկայական կամ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված՝ Հայաստանի Հանրապետության

սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակը հաստատող վկայականը և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

16. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնեն գործազուրկներն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Գործազուրկներն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնեն զբաղվածության պետական ծառայության կողմից տրված՝ գործազրկություն վերաբերյալ տեղեկանք և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

17. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի միայնակ բնակվող կենսաթոշակառուն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Միայնակ բնակվող կենսաթոշակառուն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի կենսաթոշակի վկայականը կամ կենսաթոշակի գրքույկը, բնակության վայրից (համատիրություն, գյուղապետարան, ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային մարմին) տրված տեղեկանքը ընտանիքի փաստացի կազմի (միայնակ բնակվելու) մասին տեղեկանք և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

18. Ինչպե՞ս է տրամադրվում անվճար իրավաբանական օգնությունն առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար հանրային պաշտպանի գրասենյակ կարող է դիմել երեխայի խնամակալը՝ ներկայացնելով երեխայի ծննդյան վկայականը, ծնողազուրկ լինելու մասին տեղեկանքը կամ ծնողների մահվան վկայականները, խնամակալ նշանակվելու մասին որոշումը կամ խնամակալի վկայականը:

Առանձին դեպքերում, հաշվի առնելով առանց ծնողական խնամքի մնացած երեխայի լավագույն շահը պաշտպանելու անհրաժեշտությունը, երեխային կարող է անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերվել նրա այդպիսի կամարտահայտության դեպքում, ինչպես նաև տարածքային կառավարման պետական մարմնի կամ խնամակալության և հոգաբարձության կամ այլ իրավասու մարմինների միջնորդությամբ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնեն խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանքը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ հաշվառված լինելու մասին և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

19. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի փախստականի կարգավիճակ ունեցող անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Փախստականի կարգավիճակ ունեցող անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի ճամփորդական փաստաթուղթը:

20. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի միգրացիոն պետական ծառայության կողմից տրված՝ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակավոր ապաստանի վկայականը:

21. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի անձը՝ որպես անվճարունակ անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Որպես անվճարունակ ֆիզիկական անձ անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար անձը հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի իր անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ և այդ մասին տա գրավոր հայտարարություն՝ հավաստելով, որ չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց, ինչպես նաև պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ:

Ընդ որում, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի կարգավորման ուժով՝ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կարող է դիմել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ տնտեսավարող սուբյեկտներին՝

անվճարունակ անձանց անվճարունակության փաստը ստուգելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով, և հակառակը պարզելու դեպքում դադարեցնել տրամադրվող օգնությունը:

22. Ինչպե՞ս է տրամադրվում անվճար իրավաբանական օգնություն հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց

Հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձին իր հիվանդանոցում գտնվելու և բուժման հետ կապված հարցերի վերաբերյալ կարող է տրամադրվել անվճար իրավաբանական օգնություն համապատասխան կազմակերպության միջնորդությամբ, այդ անձի դիմումով կամ դատարանի որոշմամբ:

Առանձին դեպքերում, հաշվի առնելով հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, նրան կարող է անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերվել խնամակալության և հոգաբարձության կամ այլ իրավասու մարմնի միջնորդությամբ:

23. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացի Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի ոստիկանության կողմից տրված՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը:

24. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի մարդկանց

թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի որոշումը զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու մասին և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

25. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի խոշտանգումից տուժած անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու հարցով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Խոշտանգումից տուժած անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու հարցով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի իր՝ որպես տուժած անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածով նախատեսված արարք կատարված լինելու վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը կամ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածով նախատեսված արարք կատարելու համար ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշումը կամ խոշտանգման փաստը հաստատելու մասին ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

26. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն տրված՝ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշումը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը՝ ընտանիքում բռնությունից տուժելու մասին, ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

27. Ո՞րտեղ պետք է դիմի քրեական հետապնդման ենթարկվող անձը (կասկածյալը կամ մեղադրյալը), եթե ցանկանում է ունենալ պաշտպան, սակայն չի կարողանում հրավիրել պաշտպան

Քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունենալու և հանրային պաշտպանի գրասենյակից պաշտպան հրավիրելու ցանկության դեպքում անհրաժեշտ է դիմել քրեական վարույթն իրականացնող քննիչին կամ դատարանին:

Քրեադատավարական կարգավորումների համաձայն՝ քրեական գործով վարույթն իրականացնող քննիչը կամ դատարանը պարտավոր են ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցությունը, երբ այդպիսի ցանկություն է հայտնել կասկածյալը կամ մեղադրյալը:

Հանրային պաշտպանի գրասենյակին անմիջականորեն դիմելու դեպքում հանրային պաշտպանի գրասենյակը չի կարող իրականացնել կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունը՝ անգամ, երբ տվյալ անձը պատկանում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ունեցող անձանց խմբին:

Քրեական գործով կասկածյալի և մեղադրյալի պաշտպանությունն իրականացվում է բացառապես քրեական վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ:

28. Ի՞նչ կարգով է ցուցաբերվել անվճար իրավաբանական օգնություն քրեական գործով տուժողի կարգավիճակ ունեցող անձին

Քրեական գործով տուժողի կարգավիճակ ունեցող անձանց անվճար իրավաբանական օգնություն է տրամադրվում ընդհանուր հիմունքներով՝ հանրային պաշտպանի գրասենյակ դիմելու դեպքում՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող 16 խումբ անձանց:

29. Կարող է արդյո՞ք ցուցաբերվել օգնություն քրեական գործով վկայի կարգավիճակ ունեցող անձին, եթե վերջինս ունի անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք վերապահող կարգավիճակ

Քրեական գործով վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձին անվճար իրավաբանական օգնություն չի կարող ցուցաբերվել, քանի որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն՝ վկային իրավաբանական օգնություն ցույց տալը չի ընդգրկվում հանրային պաշտպանի գրասենյակին օրենքով վերապահված գործունեության՝ խորհրդատվություն տրամադրելու և ներկայացուցչություն իրականացնելու շրջանակներում:

Բացառություն են միայն կասկածի շուրջ հարցաքննվող վկաները, որոնք օգտվում են կասկածյալի իրավունքներից: Վերջիններիս հանրային պաշտպան է տրամադրվում քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումով կամ որոշմամբ ներկայացված պահանջով:

30. Կարող է արդյո՞ք անձն ընտրել կամ փոփոխել իրեն անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերող հանրային պաշտպանին

Գործերը հանրային պաշտպաններին մակագրվում են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից՝ ըստ հանրային պաշտպանների մասնագիտացման, զբաղվածության և ծանրաբեռնվածության՝ արդարության սկզբունքի հիման վրա:

Անվճար իրավաբանական օգնություն ստացող անձը չի կարող իր հայեցողությամբ ընտրել կամ փոփոխել արդեն իսկ նշանակված հանրային պաշտպանին, իսկ նշանակված հանրային պաշտպանից հրաժարվելը ենթադրում է ընդհանրապես հանրային պաշտպանությունից հրաժարում:

31. Ո՞ր դեպքերում կարող է փոփոխվել արդեն իսկ նշանակված հանրային պաշտպանը

Հանրային պաշտպանի փոխարինումը (գործի վերամակագրումը) տեղի է ունենում այն դեպքում, երբ՝

1) գործը վարող հանրային պաշտպանն ազատվել է աշխատանքից.

2) առկա է գործը վարող հանրային պաշտպանի վստահորդի և նույն հանրային պաշտպանի այլ վստահորդի շահերի միջև հակասություն՝ նույն գործով.

3) առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հանրային պաշտպանի մասնակցությունը բացառող այլ հիմք:

Հանրային պաշտպանի փոխարինումը (գործի վերամակագրումը) կամ մակագրումը նաև այլ հանրային պաշտպանի, կարող է կատարվել այն դեպքում, երբ՝

1) գործը վարող հանրային պաշտպանը գտնվում է արձակուրդում և գործի բնույթից ելնելով անհրաժեշտ է փոխարինել հանրային պաշտպանին.

2) քննչական գործողությունները կատարվում են ՀՊԳ տվյալ նստավայրի տարածքից 100 կմ ավելի հեռավորության վրա.

3) մեղադրյալն արգելանքի տակ է պահվում տվյալ նստավայրի տարածքից 100կմ ավելի հեռավորության վրա.

4) փոխվել է ընդդատությունը կամ քննչական ենթակայությունը.

5) մարզի հանրային պաշտպանի վարած քրեական գործն անցել է վերաքննության կամ վճռաբեկության փուլ.

6) գործը վարող հանրային պաշտպանի ծանրաբեռնվածությունը չի ապահովի գործը որակյալ և ողջամիտ ժամկետում վարելը, բացառապես այն դեպքում, երբ գործը վերամակագրվել է էականորեն քիչ ծանրաբեռնված հանրային պաշտպանի.

7) վստահորդը բողոքում է գործը վարող հանրային պաշտպանից և ներկայացնում է ապացույցներ հանրային պաշտպանի առերևույթ ոչ բարեխիղճ աշխատանքի վերաբերյալ.

8) հանրային պաշտպանը բողոքում է վստահորդից՝ պայմանավորված իր նկատմամբ վստահորդի ոչ կոռեկտ, գռեհիկ և ակնհայտ անհարգալից վերաբերմունքով կամ այլ անօրինական գործողությամբ.

9) վստահորդի և հանրային պաշտպանի միջև ծագել է անհամաձայնություն կամ վեճ, որը կարող է ազդել գործի հետագա ընթացքի վրա.

10) տվյալ գործի վարումն առավել նպատակահարմար է հանձնարարել այլ հանրային պաշտպանի կամ մի քանի հանրային պաշտպանի՝ ելնելով մասնագիտացումից, գործի բարդությունից, առանձնահատկությունից կամ այլ հանգամանքներից:

32. Ի՞նչ ժամկետներում է տրամադրվում իրավաբանական օգնությունը

Հանրային պաշտպանների կողմից անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 28.09.2018թ. № 357-Լ որոշմամբ հաստատված՝ «Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին կարգ»-ի 5-րդ գլխով սահմանված ժամկետներում:

33. Ո՞ւմ կամ որտեղ է անհրաժեշտ դիմել հանրային պաշտպանից դժգոհություններ ունենալու դեպքում

Հանրային պաշտպանների աշխատանքի նկատմամբ հսկողություն է իրականացնում գրասենյակի ղեկավարը (տեղակալը), իսկ հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում ՀՀ փաստաբանների պալատի նախագահը (տեղակալը):

Հանրային պաշտպանների գործողությունների կամ անգործության առնչությամբ դժգոհություններ ունենալու դեպքում անհրաժեշտ է դիմել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին կամ նրա տեղակալին:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումները, գործողությունները և անգործությունը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբաններին պալատի նախագահին:

34. Ո՞ր պետական մարմնին են ենթարկվում հանրային պաշտպանի գրասենյակը կամ հանրային պաշտպանները

Թեև հանրային պաշտպանի գրասենյակը ծառայություն է մատուցում պետական միջոցներով (պատվերով), այդուհանդերձ անկախ է և չի ենթարկվում որևէ պետական գերատեսչության: Իրավաբանական օգնություն ցուցաբերելիս հանրային պաշտպանները ենթարկվում են բացառապես փաստաբանի վարքագծին առաջադրվող համընդհանուր պահանջներին և գրասենյակի ներքին կարգապահական կանոններին: